

հայ ընկերութեան համար, քան հոս անասունի մը պէս սատկիլ: Թէեւ շատ յանդուգն յառաջ վը նետուէի, այնուհանդերձ ինծի բաժին ինկաւ անարդ մահով մեռնիլ: Եւ ասիկա իմ սաստկադոյն կսկիծս է:

ՇԱՊՈՒՀ. - Սուրէն, դուք տար Հայոց սպարապետը եւ յանձնէ արքունի թիկնապահ գունդի մը, որ օրն ի բուն քալելով հասցնէ Անյուշ բերդ: Հոն թող մորթը հանեն: (Սուրէն առաջ գալով կը բռնէ վասակը եւ կը սկսի դանդաղօրէն առաջ երթալ):

ԱԼԱՆԱՍՂ. - (Հեգնուքեամբ) Լուր զրկէ վաղէս կայսեր՝ որ դայ եւ քեզ Արքայից Արքայի ձեռքէն ազատէ:

ՎԱՍԱԿ. - Շնթող պահլաւ, քու տէրդ զիտէ թէ Հայաստան կոնակ չունի. չի նշարեր անոր ետեւ ծածկուած Հռոմէական ինքնակալութեան հրեշտակ առիծը, որ վախ կ'ազդէ նոյնիսկ երբ քնանայ:

ՇԱՊՈՒՀ. - Հիմա դնա Արշակի հետ յաղթանակէ յաղթանակ:

ՎԱՍԱԿ. - Երկու քաջեր կ'արժեն հազարներ:

ԶՐՈՒԱՆ. - Արքայ քաջ, դեռ աւելի ծանր պատիժ մը տալու էիր այդ լիբրին:

ՎԱՍԱԿ. - (Դեռ դուրս չելած) Հայաստան գիտաւոր եւ զօրաւոր Սամսոն մըն էր. դուք, պարսիկ մեծամեծներ, քանի մը մատնիչ եւ դաւաճան հայ իշխաններու ձեռքով անոր մագերը կտրել տուիք: Բայց վաղը անոր մագերը դարձեալ պիտի բռնանին, եւ այնպէս ուժով պիտի ցնցէ սասանեան պետութեան սիւները, որ իրենց հիմերուն վրայ փլչին: (Սուրէնի հետ դուրս կ'ելլէ):

ՇԱՊՈՒՀ. - (Մտախոհ) Եթէ գոռոզ Մամիկոնեանը այսքան կատաղի է օտար հողի վրայ, հապա ի՞նչ պիտի ըլլար եթէ հայկական հողի եւ ջուրի վրայ կանգնած ըլլար:

Վ ա ր ա գ ո յ ր

(Շարունակելի)

• Գ Ր Ա Ն Օ Ս Ա Կ Ա Ն •

ՅՈՒՅԱԿ ԶԵՌԱԳՐԱՅ ԱՆԿԻՒԻՒՅՑ ԿԱՐՄԻՐ ՎԱՆՈՒՅ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ: Կազմեց Բարդէն Աթոռակից Կաթողիկոս Կիւլէսէրեան: Թղթակազմ, Բաւաճալ, Էջ ԺԳ + 1518. Կազմողին եւ մեկեմասին նկարներով: Անթիլիաս, 1957: Գին՝ 5 տոլար:

Ամէն անգամ որ նոր հրատարակուած ձեռագրաց ցուցակ մը կը ստանամ՝ սիրտս յուզումով կը լեցուի. եւ ի՞նչպէս չյուզուիլ՝ երբ կը տեսնես ճիշդ մը եւս մեր դարաւոր գանձերէն մաս մըն ալ այսպէս տրւապարեալ ցուցակներով յաւերժացնող: Ոեւէ մէկը որ գիտակից է այն ահաւոր կորուստներուն՝ որոնց ենթակայ եղած է մեր ձեռագրական գանձատունը եւ դեռ կը գտնուի կորսուելու սարսաղաղեցիկ սպառնալիքին տակ, կ'ըսեմ ոեւէ մէկը որ ասոր գիտակից է՝ յուզումով կը լեցուի ամէն մեծ ու փոքր ձեռնարկի առթիւ, որ ուղղակի կամ անուղղակի պատճառ կ'ըլլայ մեր այս անգնահատելի ժառանգութեան գոնէ մէկ կոտորակին փրկութեան:

Տպագրութիւնը կատարուած է խնամքով եւ թուղթը ընտիր է, ինչ որ շատ կենսական է նման մնայուն արժէքով կարեւոր գործի մը համար:

Գործին սկիզբը կայ կարճ եւ սակայն շահեկան ներածական մը՝ Գր. Պողարեանէ: Այս ներածականէն կ'իմանանք, որ Բարդէն Սրբազան այս ցուցակը պատրաստած է 1909-1913 չրջանին, երբ Գաղատիոյ առաջնորդ էր: Բարեբախտաբար ձեռագիր ցուցակը 1913ին Այնթապ կը բերէ եւ հոն ալ կը մնայ, մինչ Սրբազանը Միացեալ Նահանգներ կ'անցնէ: Վերջապէս միշտ մեր ձեռագիրներուն վիճակուած անհաւատալի ողիսականով մը ձեռագիրը կը փրկուի եւ տպագրութեան կը յանձնուի:

Թող ինծի ներուի գիտել հոս ներածականի մասին, որ հայ ձեռագիրներու եւ

յիշատակարաններու փրկութեան (հրատարակութեամբ) գործին մէջ մեծարժէք դեր կատարած են Երուանդ Լալայեան, Փիրղալէմեան եւ Սրուանձտեանց Սրբազան:

Յոյսով պիտի սպասենք Բարդէն Սրբազանի Ղալաթիոյ Մատենադարանին ձեռագրաց ցուցակին հրատարակութեանը, ինչպէս նաեւ Տոքթ. Յ. Թօփճեանի Արմաշի վանքին ձեռագրաց ցուցակին, եթէ վերջինս փրկուած է եւ Անթիլիաս կը գտնուի: Կը խնդրենք որ օր առաջ տպագրութեան յանձնուի նաեւ Փառէն Եպիսկոպոս Մելգոնեանի ձեռագրաց ցուցակը՝ Կիպրոսէն Անթիլիաս փոխադրուած ձեռագիրներուն, եւ արդէն Անթիլիաս գտնուածներուն հետ:

Անկիւրիոյ ձեռագրաց այս ցուցակը կը պարունակէ Կարմիր Վանքին պատկանող 309 գրչագիր, որոնցմէ 100ը ԺԸ. եւ ԺԹ. դարու ընդօրինակութիւններ եւ գործեր են: Ցուցակիս մնացեալ 14 ձեռագիրները Անկիւրիոյ չրջանին մէջ գտնուող անհատներու եւ եկեղեցիներու գրչագիրներն են, որոնցմէ երկու հատը նոյնպէս ԺԸ-ԺԹ. դարու գրչագիրներ են:

Առ հասարակ Անկիւրիոյ Կարմիր Վանքին ձեռագիրները վատ պահուած, մեծ մասամբ խոնավութենէ, աղտէ, փոշիէ, անխնամութենէ քայքայուած, փճացած վիճակ մը ունին: Մարդկային վանտալութիւնն ալ իր աւերները գործած է: Կերեւայ թէ ձեռքեր գրչագիրներու մէջէն կըտրեն հաներ են ինչ որ շահեկանութիւն կրնար ունենալ՝ յիշատակարան, պահպանակ, նա մանաւանդ մանրանկար, խորանաղարդ, լուսանցաղարդ: Այս անասելի ոճրագործութեանց եւ ականատես եղած եմ գրեթէ մեր ամէն հաւաքումներուն մէջ: Միւս թարեանները առ հասարակ իրենց ունեցած գրչագիրներուն տէր եղած են, ինչպէս որ այժմ կը ներկայանան: Սակայն եւ հանդիպած եմ մկրատուած գրչագիրներու մեր միւս վանքերուն մէջ: Երբեք պիտի չմոռնամ այն սրտի ցաւը՝ զոր զգացի Նոր Զուղայի վանքին հաւաքման մէջ տեսած բազմաթիւ մագաղաթեայ եր-

կաթագիր Կիլիկեան գրչագիրներուն՝ զարդէ, նկարէ կտրատեալ սահմակեցուցիչ վիճակը: Այս աւերը դեռ կը շարունակուի մեր կարգ մը անպաշտպան եկեղեցական գանձատուններու մէջ պահուած ձեռագիրներուն վրայ, ինչպէս օրինակ Թաւրիկի Սր. Աստուածածին եկեղեցոյն 1311էն Աւետարանին, որուն մեծարժէք մանրանկարները 1924էն քիչ առաջ կորուստուելու եւ Փարիզ ծախուելու են:

Այս հրատարակուած ցուցակին մասին հոս կ'ընեմ քանի մը պատահական նկատումներ:

Թիւ 25, Ամիրտովլէթի Աւգուստ Բժշկութեանը 1496էն վերջ գրուած է, քանի որ գրիչը Մարութա դպիր Ամասիացի՝ ծանօթ է արդէն իր մէկ Խորհրդատետրով (Վիեննայի Կայսերական Մատենադարանի), գրուած 1645ին, Զամոսցա Սր. Աստուածածնի հովանուոյն տակ:

Թիւ 204ը գրուած պէտք է ըլլայ 1615 - 1638ի միջեւ ասին մը, ի Կ. Պոլիս, ուր կը գտնուէր Թոխաթցի Միքայէլ գրիչը, որմէ բազմաթիւ ձեռագիրներ հասած են մեզի, սակայն ոչ նախ քան 1615 գրեալ:

Թիւ 249ը գրուած չի կրնար ըլլալ 1501ին: Գրիչը Աստուածատուր քահանայ ծանօթ է Երուսաղէմի Ս. Յակոբէն ԺԷ. դարու առաջին կիսուն, որմէ ունինք քանի մը գրչութիւններ:

Թիւ 307 ձառնի Ժամանակը հաւանաբար 1370ի տեսները ըլլալու է: Գրիչ եւ ծաղկող Յովհաննէս Ալինախ Եպիսկոպոս՝ ծանօթ է ինծի ուրիշ գրչութեամբ մը, 1370էն, կատարուած Երզնկայի Թիւ աւանին եկեղեցոյն մէջ: (Տես իմ Երիզա եւ Եկեղեցաց Գաւառ: Ա. Հատոր, էջ 291): Իրն է Վենետիկի Թիւ 187 Աւետարանը:

Թիւ 303ը իրապէս խիստ մեծարժէք ձեռագիր մը պիտի ըլլար՝ եթէ կտրատած չըլլային ձեռագիր Աւետարանին (1255էն) մանրանկարները: Մարտ Գունդատապլի համար գրուած այս Աւետարանը ծաղկուած եւ մանրանկարուած է եղեր մեծատաղանդ եւ անդուգական Կոստանդին ծաղկողէ, Կիլիկիոյ դպրոցին մեծագոյն վար-

պետներին: Կոստանդինյէ ծանօթ է ինծի Աւետարան մը Նոր Զուգայի վանքը, եւ հատ մըն ալ Ս. Ղազար, սակայն այս երկուքն ալ վանաւ ձեռքեր կտրեր կողոպտեր են բոլոր նկարներէն, աւագ: Կոստանդինյէ ծաղկեալ Աւետարան մը եւս յայտնուեցաւ (հաւանաբար նախկին Ապրոյեանց հաւաքածոյէն, Իգմիր), որ Փարիզ վաճառուեցաւ քանի մը տարի առաջ:

Թիւ 40ը կարեւոր յիշատակարանով ձեռագիր մըն է՝ մեր կաթողիկոսներուն պատմութեան համար: Յուշակագիրը ինծի անմեկնելի կերպով, թէեւ հարցական նշանով, 1391 նշանակած է ձեռագրին ժամանակը, մինչ յիշատակարանին մէջ կը վկայուի որ գրուած է «Յամի ութ հարիւրի, քառասուն եւ Դ. երորդի», որ կ'ընէ մեր թուականով 1395: Կը յիշատակուի նաեւ «ի հայրապետութեան տեառն թէոգորոսի»: Գուցէ ասոր համար ցուցակագիրը հարցականով 1391? նշանակած է, փոխանակ 1395ի: Թէոգորոսի համար Օրմանեան Սրբազան 1382-1392 կը նշանակէ իբր կաթողիկոս, եւ կը մերժէ 1395ը՝ այն ատեն իրեն ծանօթ յիշատակարանի մը համաձայն, ու զայն սխալ վը նկատէ: Օրմանեանի այն ատեն ծանօթ էր Նուարթ Հայոցի յիշատակարանը (Թիւ 7 Աստուածաշունչի հատուած), ուր մեր ցուցակին թիւ 40ի նոյն գրիչը մեծ մասամբ նոյն անձերու յիշատակութեամբ նոյն ՊՊԴ (1395) թուականը կու տայ, յիշելով դարձեալ «ի հայրապետութեան տեառն թէոգորոսի»: Ուրեմն այժմ երկու յիշատակարան ունինք որ 1395ին թէոգորոսը կաթողիկոս կը ճանչնան: Ուրեմն պէտք է վերստին քննենք թէոգորոս կաթողիկոսի սպանութեան կատարման թուականը, եւ ճշգրիտ թէ իրապէս ե՞րբ եղած է իր սպանութիւնը, 1392ի՞ն թէ 1395ին:

Ինծի համար մասնաւորաբար խիստ չափահաս է թիւ 43 Կանոնադիրքը, ուր իբր իջ հատուած կը նշանակուի «Թուղթ Հայոց կաթողիկոսին Կոստանդնույ, յատուածապահ գրեկէն Հոռոմկլայ, առ թագաւորն Հեթում, ի մայրաքաղաքն Սիւս, պատասխանի թղթին, որ ի Պապէն բերաւ, ի թիւն Հայոց ՈՂԷ (1248) որ գրեցաւ պատասխանի ի ձեռն արդիւնական վարդապետին Վարդանայ յարմարեալ»: Արդեօք կրնայ Այդեկցի՞ն ըլլալ:

Հրատարակութեան մէջ կ'երեւան վրիպակներ ալ:

Էջ 107 Թիւն ՌՃԼԹ վերածուած է 1610ի, որ սխալ է, եւ պէտք է ըլլայ 1690:

Էջ 897, Անտիոքայ տէր Մարտիրոս՝ անձնանուններու ցանկին մէջ եղեր է Անկիւրիոյ Տէր Մարտիրոս:

Էջ 214 «բարբը(?) թուոյ» պարզ է որ պէտք է ըլլալ «բարբըրոյ», ուր 1395ին առաջնորդ եպիսկոպոս էր Տէր Յովհաննէս արքարեւ:

Սակայն ասոնք բոլորն ալ դործին արժէքին չմնասող աննշան պակասութիւններ են: Գործը կը նկատենք մեծարժէք եւ գրեւոր հատելի, լաւ կերպով ցուցակադրուած եւ տպագրուած, ըստ պայմաններուն: Անկիւրիոյ ձեռագրաց այս ցուցակը կրկնապէս կարեւոր է, քանի որ ցուցակն է ըստ երեւոյթի այժմ բոլորովին անհետացած ձեռագրական հաւաքածոյ մը, թէեւ յոյս ունիմ որ օր մը անոնցմէ ալ յայտնուին, նման ուրիշ հաւաքածոներու, զորս Մեծ աղէտին պատճառով՝ բոլորովին կորսուած կը համարէինք:

Անկիւրիոյ ցուցակը մեր մատենագիտութեան համար կենսական եւ այլուստ անմատչելի աղբիւր մըն է, արժանի մեր սրտագին գնահատութեան:

Յ. ՔԻՐՈՍՅԱՆ



ՇՆՈՐ ՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏ. ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

ԱՌԱՔԵԼԵԱՆ ԲԱՐԿԷՆ. - Փաղաքները եւ արհեստները Հայաստանում Թ.Ժ.Գ. դարերում: Հատոր Ա: Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1958, էջ 376+76 լուսանկար տախտակներ, մեծադիր:

ԱՌԱՔԵԼԵԱՆ ՎԱՐԱՊ. - Հայերէնի չարահայտութիւն: Հատոր Ա: Պարզ նախադասութիւն: Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1958, էջ 503:

ԽԱՉԱՏՈՐԻ ԿԵԶԱՐԵՅԻ. - Ուսումնասիրութիւն, կեանքն ու գործունէութիւնը եւ բնագրեր: Աշխատանքից Ազգայնագիտական Մայիս: Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1958, էջ 220:

ԽԱՉԿԵԱՆ Լ. Ս. - Ժե. դարի հայերէն ձեռագրերի Յիշատակարաններ: Մասն երկրորդ, (1451-1480 թթ.): Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1958, էջ 360 + 596, մեծադիր:

ՂԱՅԱԴԱՐԵԱՆ Կ. - Գուին քաղաքը եւ նրա պեղումները. Ա: ՀՍՍՌ ԳԱ Հնագիտական արշավախումբի 1937-1950 թթ. աշխատանքների արդիւնները: Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1952, էջ 299, մեծադիր: (Նուէր Հեղինակէն):

ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՅԻ. - Ուսումնասիրութիւն եւ բնագրեր: Աշխատանքից Մարտիրոսեան Արտաշէս: Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1958, էջ 186:

ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՎԱՐԱՊԵՂ. - Աղբաւոր Թ. մանեան: Երեւան, 1958, էջ 32: (Նուէր Հեղինակէն):

— Զուարթնոց: Երեւան, Հայպետհրատ, 1954, էջ 26 եւ 24 նկարներ: (Նուէր Հեղինակէն):

— Հնագիտական Պեղումներ Հայաստանում, Թիւ 2: Գուին: - Գուինի 5-7րդ դարերու ճարտարապետական յուշարձանները, ըստ 1937-1939 թթ.

տախտակների պեղումների նիւթերի: Երեւան, Հայպետհրատ, 1950, էջ 121: (Նուէր Հեղինակէն):

— Էջմիածին. (Պատմահնախոսական ուսումնասիրութիւն, սուրբէն): Տպ. Մոսկուա, 1958, էջ 22 եւ 31 մեծադիր շքեղ նկարներ: (Նուէր Հեղինակէն):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶԵԿԱՅԻ. - Ուսումնասիրութիւն եւ բնագրեր: Բանք չափաւ: Աշխատանքից Սրապեան Արմենի: Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1958, էջ 308:

ՇԱԽԱՐԾԵԱՆ Ա. Ա. - Հայ մանկավարժներ (Ժ.Ժ. դար). Գիրք Ա: Երեւան, Հայպետուսմանկիրատ, 1958, էջ 622:

ՊԱՆՏԱՍՏԱՆԻ ԳՊԻՐ. - Տաղիկներ սիրոյ եւ կարօտանոց: Աշխատանքից Նազարեան Շուշանիկ եւ Մնացականեան Ասատուր: Ուսումնասիրութիւն եւ բնագրեր: Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1958, էջ 286:

ՎԱԶԳԷՆ Ա. Հայրապետ Հայոց. - Կենսագրութիւն, կենդանիներ, քարոզներ: Էջմիածին, 1958, էջ 403:



ROSZKO KAZIMIERZ ET BRAUN JAN — Catalogue des manuscrits arméniens et géorgiens des collections polonaises. Warszawa, Polska Akademia Nauk, 1958, pg. 60.

BURCHARD CHRISTOPH. — Bibliographie zu den Handschriften vom Toten Meer. Berlin, Verlag Alfred Töpelmann, 1957, 118.

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ		PRIX DE L'ABONNEMENT ANNUEL	
Խաղիւղ համար.	3000 Լիր	Pour l'Italie.	3000 Lires
Արտասահմանի համար	6 Տոլար	Pour l'Etranger	6 Dollars
Մէկ թիւը 250 Լիր	0,50 Տոլար	Le Numéro: 250 Lires	0,50 Dollars

Direzione - Amministrazione - Pubblicità - Abbonamenti — Isola San Lazzaro - Venezia (Italia) - Tel. 60-104
 Autorizzazione Tribunale di Venezia, 14 Genn. 1954, N. 153 del Registro. - Proprietario: Congr. Mechitarista di Venezia.
 Direttore responsabile: P. MESROBIO Dr. GIANASCIAN. - Tipografia Armena di S. Lazzaro in Venezia